Республика Армения ООО
«НАХАГЦЕРИ
ПОРДЗАКННУТЮН»

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Republic of Armenia
«NAKHAGTSERI
PORDZAQNNUTYUN» LLC

Հայաստանի Հանրապետություն
«ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

N 6-13/25-1

09.07.2025 թ.

Լիցենզիա ՔՊL-001139

Լիցենզիա ՔՊL-001434

Նախագծային կազմակերպություն՝ «ԷԴ ԱՐՏ ՊՐՈԵԿՏ» ՍՊԸ

Տնօրեն՝ Է. Եղիազարյան

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքի Խաչարձան բնակավայրում հետիոտնային կամրջի կառուցում

Երաշխավորվում է ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքի Խաչարձան բնակավայրում հետիոտնային կամրջի կառուցման աշխատանքների նախագծային փաստաթղթերի համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին: Նախահաշվային արժեքը կազմում է 18795.19 հազ. ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն:

ՏՆՕՐԵՆ՝ Ա.ԾԱՏՈՒՐՅԱՆ

Նախագծման հիմք են ծառայել՝

- Նախագծման թույլտվություն

Փորձաքննության է ներկայացվել նախագիծ կազմված 2 ալբոմից

Գիրք 1- Ճարտարապետաշինարարական մաս

Գիրք 2- Նախահաշիվ

<u>Ճարտարապետաշինարարական մաս</u>

Նախատեսվող կամրջի տեղում գոյություն ունեցող հետիոտնային կամուրջը գտնվում է վթարային վիճակում, նախատեսվում է կամրջի ամբողջական ապամոնտաժում:

Նախագծվող հետիոտնային կամուիրջը գտնվում է Դիլիջան համայնքի Խաչարձան բնակավայրում, Գետիկ գետի վրա:

Նախագիծն իրականացված է ՀՀՇՆ 32–03.01–2024 «Կամուրջներ և խողովակներ» պահանջներին համապատասխան, ժամանակավոր նորմատիվային ուղահայաց

բեռնվածքի տակ՝ամբոխ - 400 կգ/մ2, ընդ որում կամրջի գաբարիտն ընդունվել է Г-1.5մ:

Տեղանքը ըստ սեյսմիկ հատկության՝ ՀՀՇՆ 20.04–2020թ–ի գտնվում է II սեյսմիկ գոտում, գրունտի Amax=0.4g արագացմամբ, որը հաշվի է առնված նախագծում:

Կամրջի հենարանները նախատեսվում են միաձույլ ե/բետոնից դաս B25, F200, ՀՀՇՆ 52–01–2021 «Բետոնե և ե/բետոնե կոնստրուկցիաների շինարարական նորմերին համապատասխան: Կլոր ամրանները A240 դասի նախատեսված են ԳOUS 34028-2016-ով:

Պարբերական պրոֆիլի A500c դասի ամրանները նախատեսված են ԳOUS 34028-2016-ով:

Նախատեսվում են նաև կարգավորիչ ե/բետոնե պատերի իրականացում դաս B25, F200:

Հենարանային մասերն իրականացված են պողպատե տանգենցյալ հենարանային մասերով:

Նախագծով նախատեսվում է հետիոտնային ուղեանցի թռիչքային կառուցվածքն իրականացնել մետաղական կոնստրուկցիայով, ՀՀՇՆ 53-01–2020 «Պողպատե կոնստրուկցիաներիե համապատասխան, ընդ որում թռիչքային կառուցվածքն

իրականացված է 150x100x6մմ ուղղանկյուն կտրվածքով խողովակներից կազմված տուփավոր ֆերմայով՝ ըստ պահանջի:

Կամրջի կցորդումներումն նախատեսվում է միաձույլ ե/բետոնե հարթակներ, աստիճանավանդակներ:

Նախահաշիվ

Նախահաշիվը կազմված է աշխատանքային նախագծի ծավալների հիման վրա և համաձայն ՀՀ կառավարության 23 հունիսի 2011 թվականի N 879-Ն որոշման : Հաշվարկման հիմք են հանդիսանում 1984 թ. գները և նորմերը, որոնց վրա կիրառվել են հետևյալ գործակիցները՝

- Հիմնական աշխատավարձ	2.42527
- Մեքենաների շահագործում	3.00227

Նյութերի գները վերցված են ՀՀ ֆինանսների նախարարության 05.2025 թ. ինֆորմացիոն տեղեկագրից, նրանց վրա կիրառելով հետևյալ գործակիցները՝

- Նյութերի տեղափոխման ծախսեր	1,132
- Այլ նյութեր	1,05
- Պահեստավորման ծախսեր	1,02
Միջին ամսեկան աշխատավարձի չափ է ընդունվել	262536 դրամ
Նախահաշվում հաշվարկված է նաև՝	
- Վերադիր ծախսեր	13,3%
- Շահույթ	11%
- Ա.Ա.Հ	20%

Նախահաշվում հաշվարկված են նաև համապատասխան լիմիտավորված ծախսեր:

Դիտարկելով փորձաքննության ներկայացված նյութերը «Նախագծերի փորձաքննություն» ՍՊԸ-ն նշում է , որ՝

1. Նախագծային լուծումները համապատասխանում են ՀՀ օրենսդրության ու նորմատիվ փաստաթղթերի և նախագծային առաջադրանքի պահանջներին:
2. Նախագծի գծագրական մասը և մասնագրերը մշակված են միմյանց համապատասխան:
3. Նախագծային լուծումներին առընչվող շեղումների վերացման ուղղությամբ առաջարկված փոփոխությունները, լրացումները այլընտրանքային լուծումները քննարկվել են նախագծային կամզակերպության հետ համատեղ:

Ելնելով վերը նշվածից **«Նախագծերի փորձաքննություն»** ՍՊԸ-ի փորձաքննությունը <u>ԵԶՐԱԿԱՑՆՈՒՄ Է</u>, Երաշխավորվում է նախագծային փաստաթղթերի համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին և <u>ԵՐԱՇԽԱՎՈՐՎՈՒՄ Է ՀԱՍՏԱՏՄԱՆ:</u>

Փորձագետ Ա. Հարությունյան